ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի երկրորդ աշխատաժողովի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հուլիսի 17-ին GIZ գրասենյակում կայացավ ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի երկրորդ աշխատաժողովը:

Հանդիպման օրակարգը՝

Ժամը	Աշխատանքը
9:45-10:05	Մասնակիցների ժամանում, գրանցում
10:05-10:30	Բացման խոսք, օրակարգի ներկայացում *Վ. Համբարձումյան, ՌԶԳ ՀԿ*
10:30-10:50	Ողջույնի խոսք ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն ՀՀ Բնապահպանության նախարարություն
10:50-11:10	«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին Հուշագրի ներկայացում *Կարեն Թորոսյան/ Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ* (CARMAC II ծրագիր)
11:10-11:30	«ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին Հուշագրի ստորագրում
11:30-12:00	ՍՈՒՐՃԻ ԸՆԴՄԻՋՈՒՄ
12:00-12:20	Համակարգման հարթակի 2018թ.-ի նախնական աշխատանքային պլանի ներկայացում *Աստղիկ Դանիելյան /Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերություն/ GIZ//*
12:20-13:00	Հարցեր, քննարկումներ Միջոցառման ամփոփում

Հանդիպման մասնակիցները՝

1. Գառնիկ Պետրոսյան - ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
2. Գեորգի Խաչատրյան- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
3. Կարեն Թորոսյան- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
4. Կամո Խաչատրյան- Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամ
5. Գագիկ Թովմասյան- Բնական կերային հանդակների կառավարման փորձագետ
6. Մկրտիչ Այվազյան- Ռազմավարական զարգացման գործակալություն
7. Վարդան Համբարձումյան- Ռազմավարական զարգացման գործակալություն

8. Զառա Ալլահվերդյան - Հարավային Կովկասում շվեցարական համագործակցության գրասենյակ
9. Վարդան Ջանազյան - Հարավային Կովկասում շվեցարական համագործակցության գրասենյակ
10. Հռիփսիմե Բաբայան- ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության
11. Աստղիկ Դանիելյան- GIZ, Կենսաբազմազանության ինտեգրված կառավարումը Հարավային Կովկասում ծրագիր
12. Արամ Ասատրյան- Ռազմավարական զարգացման գործակալություն
13. Ռոզա Մարգարյան- ՀՀ Բնապահպանության նախարարություն
14. Արմինե Մկրտչյան - ՀՀ Բնապահպանության նախարարություն
15. Հովիկ Սայադյան- Միավորված ազգերի զարգացման ծրագիր
16. Արմինե Շահբազյան - Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամ

Աշխատաժողովը վարեց ՌԶԳ ՀԿ, ՏԻՄ զարգացման դեպարտամենտի տնօրեն Վարդան Համբարձումյանը:

Հանդես գալով բացման խոսքով, Վ. Համբարձումյանը ողջունեց աշխատաժողովի մասնակիցներին, և նշեց, որ հարթակի ձևավորումը կարևորվում և հիմնավորվում է բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կառավարման ոլորտում ծրագրեր իրականացնող կազմակերպությունների միջև արդյունավետ համագործակցության խթանման և ծրագրային գործողությունների համակարգման տեսանկյունից:

Բնական կերային հանդակների կայուն կառավարման խնդրի կարևորության և ներկայիս իրավիճակի, ինչպես նաև ոլորտում իրականացված աշխատանքների և համակարգման հարթակի առաջին աշխատաժողովի աշխատանքների արդյունքների ներկայացման համար Վ. Համբարձումյանը խոսքը փոխանցեց արոտների կայուն կառավարման փորձագետ Գագիկ Թովմասյանին:

Փորձագետը նշեց ոլորտում առկա խնդիրներն ու համառոտ պատմական ակնարկ կատարեց խնդիրների առաջացման պատճառներին և նրանց հետևանքների մեղմացմանն ուղղված ծրագրային աշխատանքներին:

Գ. Թովմասյանը կարևորեց գործընկերների միջև ուղղորդված համագործակցության և կապերի առավել հզորացման անհրաժեշտությունը՝ հիմք ընդունելով տնական համագործակցությունը գործընկեր կազմակերպությունների միջև վերոնշյալ ոլորտում: Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ (ՌԶԳ)/(SDA), Գերմանական Միջազգային Համագործակցության Ընկերության (ԳՄՀԸ)/(GIZ) և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի (CARMAC-2 ծրագիր) միջև եռակողմ Հուշագրի ստորագրումը և համակարգված աշխատանքների իրականացումը կնպաստի ոլորտի խնդիրների համատեղ հաղթահարմանը և անասնապահությամբ զբաղվող տնտեսվարողների գործունեության համար առավել նպաստավոր պայմանների ստեղծմանը: Հարթակի կանոնավոր գործունեության շնորհիվ հնարավոր կլինի խուսափել նախկինում հանդիպող այնպիսի խնդիրներից, ինչպիսիք են՝ նույն համայնքներում տարբեր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի կրկնությունները, տարբեր կազմակերպությունների կողմից այդ ոլորտին վերաբերող տարիների ընթացքում հավաքված արժեքավոր ինֆորմացիայի դժվար հասանելիությունը, և իրականացված ծրագրերի հաջողված փորձի փոխանակման կազմակերպման սահմանափակ հնարավորությունները:

Անդրադարձ կատարելով համակարգման հարթակի առաջին աշխատաժողովի աշխատանքներին, փորձագետը նշեց, որ հարթակի ստեղծման գաղափարը ոգևորությամբ է ընդունվել ոլորտում գործող բոլոր շահագրգիռ ազգային և միջազգային կառույցների կողմից: Ոլորտում իրականացվող գործառույթները դիտարկվում են նախ որպես սոցիալական կարևորության խնդիր, այսինքն, նպաստում են արոտօգտագործող ֆերմերների եկամուտների ավելացմանը, և երկրորդը, որը թերևս ավելի է կարևորվում, դա շրջակա միջավայրի պահպանության խնդիրն է, որին այսօր ամբողջ աշխարհում բավականին լուրջ ուշադրություն է դարձվում: Այժմ նշված երեք կազմակերպություններն արդեն ունեն համատեղ աշխատանքի և փոխհամագործակցության որոշակի փորձ, որը տեղափոխելով հարթակ և այնտեղ միավորելով ոլորտում գործող մյուս կառույցներին ևս, բնականաբար, հետագայում կբարձրանա ոլորտի ծրագրային նախաձեռնումների ներդրումային և տնտեսական արդյունավետությունը:

Հարթակը կոչված կլինի զբաղվել նաև այնպիսի կարևոր խնդրի վերհանմամբ, ինչպիսին է ոլորտին առընչվող և ոլորտի գործառույթները կարգավորող օրենքների անկատարությունը, օրենսդրական ակտերի բացը և թերի վիճակը, որոնք ինչպես ծրագիր իրականացնողների, այնպես էլ տեղական ինքնակառավարման մարմինների մոտ առաջացնում են խնդիրներ՝ կապված արոտների

կայուն կառավարման մեխանիզմներ կիրառելու հետ: Փորձագետը կրկին ողջունեց պետական կառույցների, մասնավորապես գյուղատնտեսության նախարարության ներկայացվածությունը աշխատաժողովին, քանի որ վերջինիս իրավասությունների շրջանակում է ոլորտի գործառույթների կոորդինացումը: Նա հույս հայտնեց, որ համակարգման հարթակի հիմնադրման նպատակով եռակողմ ստորագրված Հուշագիրը նաև խթան կհանդիսանա բոլոր այն միջազգային և ազգային կառույցների համար, որոնք գործում են Հայաստանի Հանրապետության տարածքում, միանալու հարթակի գաղափարին, միավորելու բոլոր ջանքերը հարթակի կայացմանը և հարթակով ամրագրված դրույթների իրականացմանը: Ի վերջո, բոլորի գերնպատակը հանրապետությունում այս ոլոտի հետ կապված տարերայնությունը կանոնակարգելը, գյուղական համայնքներում արտադրական հնարավորությունները մեծացնելն ու արոտօգտագործողների համար առավել նպաստավոր միջավայր ստեղծելն է:

Վ. Համբարձումյանը խոսքը փոխանցեց ՀՀ Գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանին: Նա ողջունեց արոտների և խոտհարքների կառավարման համակարգման հարթակի կազմակերպիչներին, հիմնադիրներին և բոլոր մասնակիցներին: Փոխնախարարի խոսքով՝ արոտների և խոտհարքների արդյունավետ օգտագործման խնդիրը երկար տարիներ եղել է գյուղատնտեսության նախարարության ուշադրության կենտրոնում:

Փոխնախարարը նշեց, որ բազմիցս առնչվելով այս խնդրին, համարում է, որ շատ կարևոր ուղղություն է ընտրված, որն իրականում բավականաչափ մեծ ներուժ է իր մեջ պարունակում և դրա ճիշտ կառավարումն ու օգտագործումը մեծ դրական ազդեցություն կարող է ունենալ անասնապահության ճյուղի զարգացման գործում: Նա շեշտեց, որ արոտների օգտագործման համար շատ է կարևորում ինչպես արոտային ենթակառուցվածքների բարելավման, այնպես էլ արոտների մակերեսային և արմատական բարելավումների ուղղությամբ իրականացված ծրագրերը:

Փոխնախարարն անդրադարձ կատարեց նաև արոտների օգտագործման գործընթացում միջհամայնքային փոխհարաբերությունների կարգավորման գործընթացին, որը որոշակի դժգոհությունների և լարվածությունների առիթ է տալիս, և պետք է լուծումներ գտնել, փոխհամաձայնեցված կարգավորումներ առաջարկել՝ նման իրավիճակներում կանոնակարգված գործելու նպատակով:

Այնուհետ, Հայաստանում ՄԱԶԾ հողերի և անտառների կայուն կառավարման ներդնումը Հայաստանի հյուսիս արևելյան լեռնային լանդշավտներում ծրագրի ղեկավար Հովիկ Սայադյանը

նշեց, որ ծրագրի շրջանակներում 1000 հեկտար անտառային դեգրադացված արոտավայրերի վերականգնման խնդիր ունեն: Անտառային տարածքները, որպես բնական կերհանդակներ տարբերվում են մյուս արոտավայրերում իրականացվող գործառույթներից, և լրացուցիչ ուսումնասիրություն և մոտեցում են պահանջում, և գտնում են, որ վերոնշյալ ծրագրի իրականացման գործընթացում հարթակը օգտակար դեր կունենա, քանի որ այն հիմնական սկզբունքը, որը նշեց Գագիկ Թովմասյանը, արոտավայրերի կայուն կառավարումը, կերային բազայի ստեղծումը ու անցումը բնապահպանական հարթություն՝ համահունչ է նաև իրենց ծրագրի սկզբունքներին: Նա հույս հայտնեց, որ հարթակում համագործակցությունը շատ օգտակար կլինի:

Հաջորդիվ, հանդիպման վարող Վ. Համբարձումյանը «ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի հիմնադրման» մասին Հուշագրի ներկայացման համար խոսքը փոխանցեց Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Կարեն Թորոսյանին:

Կ. Թորոսյանը տեղեկացրեց, որ հարթակի Հուշագիրը մշակվել է GIZ, SDA և ADF կազմակերպությունների համագործակցության, ինչպես նաև համակարգման հարթակի նախորդ աշխատաժողովի մասնակիցների քննարկումների և կատարված առաջարկությունների արդյունքում: Ներկայացվող Հուշագիրը ընդունվել է որպես ստորագրման վերջնական տարբերակ: Մանրամասն ներկայացնելով կողմերի համար Հուշագրով նախատեսված գործառույթները, պրն Թորոսյանը շեշտեց Հուշագրի այն կետը, որով նախատեսվում է, որ սույն Հուշագրին, ցանկացած պահի կարող է միանալ վերոհիշյալ ոլորտում գործող ցանկացած շահագրգիռ կազմակերպություն, լրացուցիչ համաձայնագրով՝ որպես գործընկեր կամ որպես Կողմ: Հարթակը կոչված լինելով համակարգելու ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերը, շատ կարևոր է, որ ոլորտի բոլոր շահագրգիռ կառույցները հնարավորություն ունենան իրենց մասնակցությունն ունենալ հարթակի աշխատանքներին:

Հուշագրի ներկայացման ավարտից հետո պրն Համբարձումյանն առաջարկեց անցնել հանդիպման հիմնական արարողությանը՝ Հուշագրի ստորագրմանը: Հուշագիրը ստորագրեցին Ռազմավարական զարգացման գործակալություն ՀԿ նախագահ Մկրտիչ Այվազյանը, Գերմանական Միջազգային Համագործակցության Ընկերության ներկայացուցիչ Աստղիկ Դանիելյանը և Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ծրագրերի կառավարման և զարգացման տնօրեն Գեորգի Խաչատրյանը:

Վարդան Համբարձումյանը Հուշագրի ստորագրման հետ կապված շնորհավորեց ներկաներին, և արտահայտվելու համար խոսք տվեց ստորագրող կողմերին:

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամի ներկայացուցիչ Գեորգի Խաչատրյանը շնորհավորեց բոլորին, քանի որ միշտ խոսվել է ոլորտում իրականացվող ծրագրերի սակավ ռեսուրսների արդյունավետ օգտագործման մասին, և այդ առումով ամենաառաջին և օգտակար քայլերից մեկը տարբեր ծրագրերով իրականացվող գործառույթների համակարգումն է: Պրն Խաչատրյանը նաև շնորհակալություն հայտնեց գործընկերներին, որոնց հետ նախորդ ամիսների կատարված աշխատանքի արդյունքում արդեն կա կայացված փաստ, և համոզմունք հայտնեց, որ հարթակի աշխատանքի շնորհիվ նկատելի կբարձրանանան ոլորտում իրականացվող ծրագրերի արդյունավետությունը, իսկ որոշ ժամանակ անց հարթակի ստեղծումը ներկաներին հպարտանալու առիթ կտա:

ՌԶԳ ՀԿ նախագահ Մկրտիչ Այվազյանը նույնպես շնորհավորեց Հուշագրի կայացած փաստի առթիվ, բոլորին մաղթեց արդյունավետ աշխատանք և նշեց, որ ընդամենը 8-10 տարի առաջ, երբ ոլորտի ծրագրերը նոր էին թափ առնում, նույնիսկ հնարավոր չէր պատկերացնել, որ արդյունքում մի քանի կարևոր դերակատարներ կմիավորվեն իրենց ուժերն այս ոլորտում՝ ավելի համակարգված և արդյունավետ գործելու համար: Իսկ այսօր դա արդեն կայացած իրողություն է:

ԳՄՀ ընկերության ներկայացուցիչ Աստղիկ Դանիելյանն իր հերթին շնորհավորեց բոլոր ներկաներին և նշեց, որ աշխատաժողովի մասնակիցները տեղյակ են, թե բոլորի կողմից որքան երկարատև ու քրտնաջան աշխատանք է տարվել այդ արդյունքին հասնելու համար: Աստղիկ Դանիելյանը շեշտեց, որ Հուշագրի ստորագրումը սկիզբն է և այն առավել մեծ պատասխանատվություն է դնում բոլորի ուսերին: Նա կարևորեց և շնորհակալություն հայտնեց պետական մարմիններին՝ աջակցության համար, առանց որի հնարավոր չի լինի հաջող ընթացք տալ որևէ նման ծրագրի, քանի որ նրանք այս ոլորտում որոշում կայացնող օղակն են հանդիսանում, և շատ կարևոր է իրենց և ոլորտում գործող մյուս մասնակիցների ակտիվ մասնակցությունը հարթակի կայացման գործում: Նա հույս հայտնեց, որ հարթակին կմիանան բոլոր այն շահագրգիռ կողմերը, որոնց ներկայությունն ու մասնակցությունը հարթակի աշխատանքների ընթացքին ավելի մեծ արդյունավետություն կհաղորդեն:

Բնական կերային հանդակների կառավարման փորձագետ Գագիկ Թովմասյանը համաձայնվեց Աստղիկ Դանիելյանի արտահայտած մտքին, որ հարթակի կայացման հաջողության համար առանցքային կարևորություն ունի համագործակցող կազմակերպությունների և առավել ևս պետական կառույցների ակտիվ մասնակցությունը: Որպես ոլորտի փորձագետ, ով երկար տարիներ մասնակցելով հարթակի հիմնադիր կազմակերպությունների իրականացրած ծրագրերին, քաջատեղյակ է ոլորտի խնդիրներին և տեսնում է դրանց լուծման հնարավոր ուղիները, պրն Թովմասյանն անթաքույց ոգևորությամբ շնորհավորեց ներկաներին և հավաստիացրեց, որ այսուհետ ևս ամբողջ մասնագիտական կարողությունները կներդնի հարթակի մասնագիտական հարթության վրա տարվող աշխատանքներում հաջողությունների հասնելու համար:

Հաջորդիվ, Վ. Համբարձումյանը խոսքը փոխանցեց ՀՀ Գյուղատնտեսության փոխնախարար Գառնիկ Պետրոսյանին: Գյուղատնտեսության նախարարի տեղակալը միացավ հնչեցրած շնորհավորանքներին և համոզմունք հայտնեց, որ համախմբելով ոլորտում գործող բոլոր կողմերի ուժերը, անկասկած կստացվեն դրական արդյունքներ:



ՀՀ բնական կերհանդակների՝ արոտավայրերի և խոտհարքների կայուն կառավարմանն ուղղված ծրագրերի համակարգման հարթակի նախնական աշխատանքային պլանի ներկայացման համար խոսքը փոխանցվեց ԳՄՀԸ ներկայացուցիչ Աստղիկ Դանիելյանին: Հուշագրի մշակման աշխատանքներին զուգահեռ կազմվել և քննարկվել է նաև հարթակի 2018 թվականի աշխատանքային պլանը, որը նախնական փաստաթուղթ է, և առաջարկությունների դեպքում կարող է լրամշակվել: Այն բոլոր կողմերի համար, որոնք հետաքրքրություն կցուցաբերեն և ցանկություն կհայտնեն միանալու հարթակին, ներառյալ պետական կառույցները, մենք կշրջանառենք աշխատանքային պլանը: Մանրամասն ներկայացնելով աշխատանքային պլանի բաժիններն իրենց գործառույթներով, Աստղիկ Դանիելյանը նշեց, որ տարբեր կառույցների մասնակցությունը և ներգրավվածությունը հարթակին կարող է լինել տարբեր ձևաչափերով, սկսած զուտ ինֆորմացիայի փոխանակումից մինչև համագործակցված աշխատանքներ, այսինքն, այստեղ կառույցներին չեն ներկայացվելու գործողությունների խիստ սահմաններ, մոտեցումը շատ ճկուն է լինելու և հարթակի կազմակերպիչները պատրաստ են առանձին-առանձին քննարկել յուրաքանչյուրի հետ համագործակցության ընդունելի ձևաչափը:

Ներկայացումների ավարտից հետո Վարդան Համբարձումյանը ամփոփեց հանդիպումը: Հարթակի աշխատանքների կազմակերպման համար պետք է ստեղծվի աշխատանքային խումբ, որտեղ կներառվեն վերոնշյալ երեք կազմակերպությունների և հարթակին միանալու ցանկություն հայտնած մյուս կառույցների ներկայացուցիչները: Հովիկ Սայադյանը հարցրեց, թե արդյոք նախատեսվում է հարթակի վերաբերյալ փաստաթղթերը տեղադրել համացանցում, կամ հարթակն առանձին կայքէջ կունենա, Աստղիկ Դանիելյանը պատասխանեց, որ ողջունում է առաջարկը, նման քննարկումներ արդեն եղել են, սակայն այսպիսի նախաձեռնումներն ավելի լավ կլինի որոշել և իրականացնել արդեն ձևավորված աշխատանքային խմբի շրջանակներում, ներգրավված բոլոր կազմակերպությունների համաձայնությամբ:

Համակարգման հարթակի երկրորդ աշխատաժողովին վերաբերյալ անդրադարձ է կատարվել ՀՀ Գյուղատնտեսության նախարարության պաշտոնական էջում: Մանրամասներին ծանոթանալու համար տեսեք նյութը՝ հղումով: Հարթակի երկրորդ աշխատաժողովի աշխատանքների վերաբերյալ տեսանյութ է տեղադրվել նաև ԳԶՀ ֆեյսբուքյան էջում, որը կարող եք դիտել՝ հղումով: